



«Անկախ ղիտորղ» հասարակական դաշինք

2017 թվականի ապրիլի 2-ի ՀՀ Ազգային Ժողովի ընտրությունների կարճաժամկետ ղիտորղության նախնական Եզրակացություն

2017 թ. ապրիլի 2-ի ՀՀ ԱԺ ընտրությունների ժամանակ «Անկախ ղիտորղ» հասարակական դաշինքի կողմից իրականացված կարճաժամկետ ղիտորղության նախնական եզրակացություն:

2017 թ. ապրիլի 2-ին ՀՀ ԱԺ ընտրությունների քվեարկության օրը «Անկախ ղիտորղ» հասարակական դաշինքը կարճաժամկետ ղիտորղական առաքելություն է իրականացրել Հայաստանի Հանրապետության բոլոր տասը մարզերի և Երևան քաղաքի թվով 200 ընտրական տեղամասերում և 35 տարածքային հանձնաժողովներում շուրջ 450 ղիտորղների կողմից: Միաժամանակ ընտրական տեղամասերից դուրս իրավիճակն ուսումնասիրելու, ինչպես նաև առանձին ղիտարկվող տեղամասերում առաջացող խնդիրների կանխման և լուծման նպատակով գործել են 45 ղիտորղական շրջիկ խմբեր:

Դիտարկված տեղամասերում ձեռքբերված տեղեկությունների համաձայն արձանագրվել է հետևյալ իրավիճակը:

Քվեարկության ընթացքում

1. Քվեարկության խցիկ մի քանի անձի միաժամանակ մուտքի դեպքեր արձանագրվել են ղիտարկված տեղամասերի 40%-ում, դա առավել շատ դրսևորվել է ժամը 08:00-12:00 ժամանակահատվածում:
2. Ընտրողների կողմից քվեաթերթիկները քվեախցիկներից դուրս լրացնելու դեպքեր արձանագրվել են ղիտարկված տեղամասերի 30%-ում, առավելապես ժամը 08:00-16:00 ժամանակահատվածում:
3. Քվեարկելուց հետո քվեարկության մասին հանձնաժողովի անդամներին կամ վստահված անձանց տեղեկացնելու կամ ուղղակի բարձրաձայնելու դեպքեր արձանագրվել են ղիտարկված տեղամասերի 13%-ում, առավելապես ժամը 08:00-16:00 ժամանակահատվածում:
4. Քվեարկության սենյակում գտնվելու իրավունք չունեցող անձանց քվեարկության սենյակում գտնվելու դեպքեր արձանագրվել են ղիտարկված տեղամասերի 16.5%-ում, առավելապես ժամը 08:00-16:00 ժամանակահատվածում:
5. Տեղամասում վկայականը տեսանելի չկրող անձինք նկատվել են ղիտարկված տեղամասերի 33 %-ում, առավելապես ժամը 08:00-12:00 ժամանակահատվածում:
6. Որևէ վստահված անձի կողմից հանձնաժողովի անդամներին, ընտրողներին կամ ոստիկաններին կարգադրություններ տալու կամ հանձնաժողովի նախագահի

գործառույթները իր վրա վերցնելու փորձեր արձանագրվել է դիտարկված տեղամասերի 17 %-ում, առավելապես ժամը 08:00-16:00 ժամանակահատվածում:

7. Ընտրատեղամասում վիճաբանություն տեղի է ունեցել դիտարկված տեղամասերի 23.8%-ում, առավելապես ժամը 08:00-12:00 ժամանակահատվածում:

Քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում

1. Տարբերվող գույնի կամ երանգի գրիչով որևէ անձի օգտին քվեարկած քվեաթերթիկներ նկատվել են դիտարկված յուրաքանչյուր 5 տեղամասերից 1-ում:
2. Քվեարկության ծրարներում բացի քվեաթերթիկից այլ իրեր հայտնաբերվել են դիտարկված տեղամասերի շուրջ 23.8 %-ում
3. Հաշվարկի գործընթացին վստահված անձանց անմիջական մասնակցություն արձանագրվել է դիտարկված տեղամասերի 14.4 %-ում:
4. Քվեաթերթիկներն անվավեր ճանաչելու գործընթացում հանձնաժողովի կողմից ոչ միատեսակ մոտեցում է ցուցաբերվել դիտարկված տեղամասերի 91.5 %-ում:
5. Հանձնաժողովի անդամները քվեարկության կարգին և իրենց գործառույթներին դիտորդների դիտարկմամբ՝ չեն տիրապետել դիտարկված տեղամասերի 71 %-ում:

Միաժամանակ

1. Դիտորդների տեղեկությունների հիման վրա բացահայտված խախտումները և գնահատականները գրանցամատյաններում գրանցվել են դիտարկված տեղամասերի 70 %-ում:
2. Դիտորդների գնահատմամբ՝ դիտարկված տեղամասերի 35.5%-ում իրավասու մարմինների՝ հանձնաժողովի անդամների, ոստիկանության ծառայողների և իրավասու այլ մարմինների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել իրավախախտումները վերացնելու ուղղությամբ, համապատասխանաբար 12 %-ում նման գործողություններ իրականացվել են ոչ միշտ կամ մասամբ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ քվեարկության օրը և նախորդող լրության օրը բազմաթիվ ահազանգեր են ստացվել «Հայաստանի Հանրապետական կուսակցության», «Հայ հեղափոխական դաշնակցության» և «Ծառուկյան» դաշինքի կողմից ընտրակաշառքների զանգվածային, համատարած բաժանման մասին, որոնց վերաբերյալ տեղեկությունները տարածվել են նաև զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական կայքերով: Չնայած դրան, իրավապահների կողմից ընտրակաշառքի գեթ մեկ դեպք չի արձանագրվել, բացահայտվել և կանխվել:

Քվեարկության օրվա հիմնական բնութագրող խախտումները բացի վերը նշվածներից հանդիսացել են պարբերական կուտակումները ընտրատեղամասերի մոտ, որոնք առաջացել են ընտրողներին խմբերով տեղամասեր տեղափոխելու և ուղղորդման հետևանքով:

Այդպես էլ այս ընտրությունների ընթացքում նախօրոք հայտնի չդարձան զինծառայողների քվեարկության տեղամասերը: Դիտարկված տեղամասերում զինծառայողների քվեարկությունն իրականացվել է նրանց շարային կարգով տեղամաս բերելու և հրամանատարական վերահսկողության միջոցով:

Քրեակատարողական հիմնարկներում քվեարկության արդյունքները վերահսկել հնարավոր չի եղել. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամներին, որոնք ունեցել են նաև ընտրությունների ընթացքում դիտորդություն անելու իրավունք և համապատասխան վկայական թույլ չեն տվել մուտք գործել ՔԿՀ, և վերջիններս հնարավորություն չեն ունեցել հետևելու քվեարկության ընթացքին:

Ըստ ՀՀ ԿԸՀ կողմից հրապարակված տվյալների՝ ՀՀ 11 քրեակատարողական հիմնարկներում ընտրելու իրավունք ունեցող 1487 կալանավորված և դատապարտված անձանցից քվեարկությանը մասնակցել են 1318-ը, որոնցից 1023-ը (77.6 %) քվեարկել են իշխող ՀՀԿ-ի օգտին, որը կասկածի տակ է դնում քվեարկության ազատ լինելը:

Ի մի բերելով դիտարկման նախնական տվյալները՝ արձանագրում ենք, որ դիտարկված բոլոր տեղամասերում հանձնաժողովի անդամների, վստահված անձանց կամ այլ դիտորդների կողմից չեն նկատվել ջանքեր ընտրական խախտումների մասին բարձրաձայնելու, ահազանգելու, դրանք կանխելու ուղղությամբ:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը ներկայացնող դիտորդներն արձանագրել են նաև դիտորդական կազմակերպությունների անվան տակ հանդես եկող անձանց կողմից այլ կուսակցությունների օգտին շահագրգիռ գործողություններ կատարելու դեպքեր:

Ամփոփելով դիտարկման նախնական արդյունքները՝ արձանագրում ենք

1. Քվեարկությունը տեղի ունեցավ ոչ ազատ պայմաններում,
2. Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված շատ խնդիրներ (վարչական ռեսուրսների զանգվածային և կազմակերպված չարաշահում, առաջադրված կուսակցությունների և դաշինքների մրցակցային անհավասար պայմաններ) և դրանց կանխման, վերացման ուղղությամբ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ՀՀ Ոստիկանության, այլ իրավապահ մարմինների ոչ պատշաճ արձագանքը և անգործությունը ամրագրող անպատժելիության մթնոլորտը իր արտահայտումը գտավ և ազդեցությունն ունեցավ նաև քվեարկության օրը:
3. Քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում, քվեաթերթիկների հաշվարկման փուլում թվաբանական կեղծիքները զանգվածային բնույթ չեն կրել:
4. Ընտրությունները խաթարող, խախտող գործողությունները չեն համարվում ծանր հանցագործություն, պատասխանատվությունը ընտրախախտումների համար որպես կանխարգելիչ միջոց արդյունավետ չէ:
5. Քվեարկությունն ընթացավ բազմաթիվ խախտումներով և քվեարկողների նկատմամբ ճնշումների և վերահսկողության պայմաններում:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը 2017թ. ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները գնահատում է ամբողջությամբ անազատ:

Որոշակի տեսակների խախտումների տեղամասերի ցանկը կգտնեք աստեղ՝ [PDF](#) և [EXCEL](#) ձևաչափերով:

«Անկախ Դիտորդ» հասարակական դաշինք, ի դեմս՝

Հելսինկյան Քաղաքացիական Սասմբլեայի Վանաձորի գրասենյակի

Իրազեկ քաղաքացիների միավորման

Մարտունու կանանց համայնքային խորհրդի

Գորիսի մամուլի ակումբի